

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՍՆԻ ՏՊԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1918–1920 ԹԹ.

Հայաստանի առաջին հանրապետության գոյության երկուսուկես տարիները, չնայած սովի և հիվանդությունների ծանր պայմաններին, հրատարակչական գործի տեսակետից կարելի է արդյունավետ ժամանակահատված համարել, ինչում փոքր չէր Հայ առաքելական եկեղեցու ավանդը, որն իր սուղ միջոցներով պահվող տպարանում լույս ընծայեց տարաբնույթ գրքեր¹:

Հանրապետության գոյության տարիներին Մայր Աթոռի տպարանի գործունեությունը կապված է կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցի (1911–1930) անվան հետ: Այդ շրջանում երկրում գործող բազմաթիվ տպարանների² համեմատությամբ Էջմիածնի տպարանը բավականին բեղմնավոր գործունեություն է ծավալել: Սակայն պետք է նշել, որ նորանկախ հանրապետության քայքայ-

¹ «Հայ գիրքը 1901–1920 թթ.» մատենագիտության մեջ ընդգրկված գրքերի ցանկերն ապացույցն են այն բանի, որ 1918–1920 թթ. Հանրապետությունում տպված 58 գրքերից 23-ը լույս է տեսել հենց Էջմիածնի տպարանում (Հայ գիրքը 1901–1920 թթ.: Մատենագիտություն, հ. 7, Երևան, 2007, էջ 563–624):

² Հայաստանի Հանրապետությունում գործող տպարանների և տպագրված գրքերի վերաբերյալ պատմաբաններն իրարամերժ կարծիքներ են հայտնում: Այսպես՝ խորհրդային շրջանի պատմաբան Կ. Խուդավերդյանը գրում է, որ 1918–1920 թթ. երկրում գործել է ընդամենը 6 տպարան, որտեղ տպագրվել է մոտ 10 գիրք (Худавердян К., Культурная революция в Советской Армении (1918–1920), Ереван, 1966, с. 55): Ըստ պատմաբան Գ. Վարդանյանի՝ 1918–1920 թթ. ընթացքում Հանրապետությունում գործել է 11 տպարան, որոնցից 4-ը՝ Երևանում, 3-ը՝ Ալեքսանդրապոլում, իսկ մնացածը՝ Վարդաշապատում, Նոր Բայազետում, Գորիսում և Կարսում: Տպագրվել է 36 անուն գիրք (Վարդանյան Գ., Մշակույթը Հայաստանի առաջին հանրապետությունում (1918–1920 թթ.), Երևան, 2003, էջ 125): Մամվել Կարապետյանի և Էմմա Աբրահամյանի կողմից 2012 թ. կազմված քարտեզում նշված տպարանների քանակն անցնում է 20-ից (Տպարանները հայոց հայրենիքում, 1771–2012 (ովիվում է տպագրության 500-ամյակին), քարտեզ, կազմ.՝ Ս. Կարապետյան, տվյալ մշակ.՝ Է. Աբրահամյան, Երևան, 2012):

ված տնտեսությունը, անկում ապրած մշակութային կյանքը չէին կարող իրենց բացասական հետքը չթողնել տպարանի գործունեության վրա: Եկեղեցին մեծ ջանքեր գործադրեց, որպեսզի չդադարի այդ հաստատության գործունեությունը:

Մայր Աթոռի տպարանն առաջնորդվում էր դեռևս 1917 թ. մայիսի սկզբին Գյուտ վարդապետ Ղազարյանի և այլ նշանավոր հոգևորականների կողմից մշակված և նույն թվականի հունիսի վերջերին ընդունված միաբանական կանոնադրությամբ³, որում կար 17 հոդվածից բաղկացած ներքին հրահանգ տպարանի համար: Անկախ պետականության գոյության տարիներին հաստատության կառավարումն իրականացնող տեսուչները եղել են երկուսը՝ Արսեն ծ. վարդապետ Ղլտճյանը, ով կառավարել է տպարանը ընդմիջումներով և Աշոտ եպիսկոպոս Շխյանցը:

Նշյալ կանոնադրությամբ առաջնորդվելը ոչ միայն կանոնակարգում էր տպարանի գործունեությունը, այլև պատասխանավորություն էր սահմանում տեսչի առաջ՝ բարեխղճորեն կատարելու իր պարտականությունները և պարբերաբար միաբանական ընդհանուր ժողովին տեղեկացնելու ֆինանսական խնդիրների մասին: Դրանք հիմնականում լուծվում էին ժողովի որոշմամբ՝ տպարանին գումարներ տրամադրելու ճանապարհով:

Այդ տարիներին տեսուչների ներկայացրած հաշիվներից պարզ է դառնում, ընդ տպարանը կանգնած է եղել լուրջ ֆինանսական և բազմաթիվ այլ խնդիրների առաջ: Հատկապես մեծ չափով զգացվել է թղթի պակաս:

Թեև դեռևս 1919 թ. մայիսի 23-ին «Հայաստանի աշխատավոր» թերթում տպագրված էջմիածնի պետականացման վերաբեր-

³ ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 459, թ. 6, 26-29: Կանոնադրությունը 1920 թ. լույս է տեսել նաև առաձևին գրքույկի տեսքով (Մայր Աթոռ Մբ. էջմիածնի միաբանական կանոնադրություն, էջմիածին, 1920, 16 էջ):

յալ հողվածում, Մայր Աթոռի հասցեին հնչեցված մեղադրանքների թվում, ընդգծվում էր նաև այն, որ «տպարանն ունի մեծաքանակ թուղթ, որոնք անխնամ են, իսկ մի մասն էլ Վաղարշապատի շուկայում լիովի վաճառում են այն դեպքում, երբ Երևանի պետական հաստատությունները թղթի սով են ապրում»⁴: Սակայն իրավիճակը մի փոքր այլ էր:

Թուղթը բերվում էր մեծ մասամբ Թիֆլիսից, որը ճանապարհների անապահովության, խառնակ իրավիճակում հարուցվող դժվարությունների պատճառով երբեմն չէր հասնում Հայաստան: Նույնիսկ գումարի առկայության պայմաններում՝ վագոններով թղթերն ամիսներ շարունակ մնում էին սահմանին: Այդ պայմաններում դրանք երկիր հասցնելու համար Սինոդը երբեմն դիմում էր զարտուղի ճանապարհների⁵: Հաստատության աղքատիկ վիճակը հատկապես արտացոլված է 1919 թ. հուլիսի 5-ին իրականացրած թղթատան ցուցակագրման տվյալներում⁶: 1920 թ. հունվարի 20-ին Ամենայն Հայոց կաթողիկոսին ուղղված զեկուցագրում իրավիճակն առավել ցայտուն ներկայացնում է տպարանի տեսուչ Արսեն վարդապետը: Նա զեկուցագրի վերջում հույս էր հայտնում, որ «բերուած թղթով հնարավոր կլինի գոնե հրատարակել 1921 թ. օրացոյցը»⁷: Եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ Էջմիածնի չափագրական մատյանների⁸ թիվն անցնում էր մեկ տասնյակից, իսկ նրանց ծավալը 15 թերթից պակաս չէր, և, բացի այդ, Էջմիած-

⁴ «Հայաստանի աշխատավոր», 23 մայիսի, 1919 թ., N 57, ք. 1, Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, զիբք 4, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գործունեությունը առաջին հանրապետության տարիներին, Երևան, 1997, էջ 136-137:

⁵ ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 588, ք. 6:

⁶ Նույն տեղում, ֆ. 56, ց. 14, գ. 365, ք. 18:

⁷ Նույն տեղում, ֆ. 57, ց. 2, գ. 588, ք. 3 շրջ.:

⁸ Հնդ որում, այդ տարիներին հրատարակված և մեկը մյուսին փոխարինած «Արարատ»-ն ու «Էջմիածին»-ը ևս ունեին իրենց առանձին մատյանները (ՀԱԱ, ֆ. 56, ց. 15, գ. 815, ք. 7, ք. 11-12):

նում հայտնված լավորակ թղթի մի մասն ուղարկվում էր Ջիվո-րական շտաբի և Ներքին գործերի մինիստրության կարիքների համար, իսկ մի մասը փոխանակվում էր⁹, ապա պատկերն առավել քան ամբողջական է դառնում:

Բավարար չափով չէին վարձատրվում նաև տպարանի բանվորները, որն էլ, իր հերթին, ոչ միայն դանդաղեցնում, այլ երբեմն անհնարին էր դարձնում կատարվող աշխատանքը: Տեսուչ Արսեն ծ. վարդապետը 1919 թ. դեկտեմբերից մինչև 1920 թ. հոկտեմբերն ընկած ժամանակահատվածում տպարանի գործունեությունն ամփոփող իր զեկուցման մեջ այդ շրջանում կատարված աշխատանքի անհաջողությունը հիմնականում բացատրում էր աշխատող ձեռքի պակասով և եղած բանվորների անբարեխիղճ աշխատանքով, ովքեր ձուլարանում աշխատելու համար 7000-8000 ռուբլի օրավարձ էին պահանջում¹⁰: Եվ դա այն դեպքում, երբ ձուլիչ մեքենան նորմալ գործի դնելով տպարանը կարող էր ամսեկան 90 փութ տառ ձուլել և մատակարարել հանրապետության տպարաններին՝ տարեկան ապահովելով 1 մլն ռուբլու շահույթ¹¹: Տպարանի բանվորների այդօրինակ պահվածքը պայմանավորված էր ոչ միայն զումարային խնդիրներով, այլև նրանց նկատմամբ տպարանի կառավարիչների ու վանականների ցուցաբերած անարդար վերաբերմունքով¹²: Այս ամենին զումարվում էր նաև ցրտի պայմաններում առանց վառելափայտի աշխատելը, որը չէր կարող լրացուցիչ չազդել բանվորների աշխատանքի և այն պատշաճ կատարելու պատրաստակամության վրա:

Աշխատող ձեռքի պակաս հատկապես զգացվում էր 1920 թ. թուրք-հայկական պատերազմի ժամանակ, երբ գրեթե բոլոր բան-

⁹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 588, թ. 1:

¹⁰ Նույն տեղում, գ. 627, թ. 9-10:

¹¹ Նույն տեղում:

¹² Մատենադարան, Լ. Ս. Լիսիցյանի ֆոնդ, թղթ. № 261, վավ. 11:

վորները գորակոչվել էին բանակ: Այդ հանգամանքը նույնիսկ տպարանին կանգնեցրեց իսպառ փակման եզրին: Այդ էր պատճառը, որ Արսեն ծ. վարդապետը 1920 թ. նոյեմբերի 18-ին կաթողիկոսին ուղղված իր գրության մեջ խնդրում էր միջնորդել Գլխավոր շտաբի առաջ՝ տպիչ Արտաշես Մելքոնյանին (36 տարեկան, մի մատը կտրած, աչքից տկար) և կազմարար Հայրապետ Սուքիասյանին բանակ չգորակոչելու համար¹³, քանի որ այլապես տպարանի փակումն անխուսափելի կլիներ:

Չնայած այդ դժվարին դրությանը, երբ վանական կառավարությունը ոչ միայն գումար, այլ օրական ընդամենը 2 փութ ցորեն դժվարությամբ էր կարողանում տալ բանվորներին¹⁴, լինում էին դեպքեր, երբ հաշվի առնելով խառնակ իրավիճակում տպարանի կայուն գործունեության մեջ աշխատողների ունեցած ներդրումը, նրանց տրվում էր հավելյալ գումարներ՝ «կյանքի թանկության» պայմաններում գոնե իրենց գոյությունը պահպանելու համար¹⁵:

Տպարանին լուրջ ֆինանսական խնդիրների առջև էր կանգնեցրել տպագրության հետ կապված ծախսերը: Գրքերը լույս էին տեսնում փոքր տպարանակով, իսկ գոյացած շահույթը չէր ապահովում տպագրության համար նախատեսված էլքի գումարի գոնե 50 տոկոսը: Ունեցած մանր պատվերները՝ բլանկների, բուկլետների, ինչպես նաև մասնավոր հաստատությունների, վարչությունների համար տպված հայտարարությունները, շատ քիչ էին, իսկ եղածներն էլ կատարվում էին ապառիկով¹⁶: Ընչ վերաբերում է «Արարատ» ամսագրի հրատարակումից ստացված շահույթին,

¹³ ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 588, թ. 9:

¹⁴ Նույն տեղում, ֆ. 57, ց. 2, գ. 2194, թ. 15:

¹⁵ Խոսքն առավել քան վերաբերվում է գրաշար Մմբատ Ճուղուրյանին, ում բազմամյա ծառայությունը հաշվի առնելով Միաբանական ընդհանուր ժողովը որոշում կայացրեց նրա կենսաթոշակն ավելացնել 25 տուրլիով («Վավերագրեր...» էջ 66-67):

¹⁶ Տպարանն ուներ նաև ապառիկների մատյան (ՀԱԱ, ֆ. 56, ց. 15, գ. 815, թ. 2-4):

ապա պետք է նշել, որ անկախության տարիներին այն լույս տեսավ ընդամենը երկու համարով՝ 1918 թ. հունվար-դեկտեմբեր և 1919 թ. ապրիլ-դեկտեմբեր ամսացույցերով և չնչին տպաքանակով: Մա հաստատվում է 1920 թ. հունիսի 29-ին վանական վերստուգիչ հաստատությունների վերատեսուչ Բենիկ ծ. վարդապետի՝ Վանական խորհրդին ներկայացրած հաշվետվությամբ, որտեղ իմի են բերված «Արարատի» վերջին տարիների հրատարակությունների նպատակով կատարված ծախսերը¹⁷: Նույնը վերաբերվում է նաև ամսագրի անմիջական շարունակությունը հանդիսացող՝ 1920 թ. հունվարից հրատարակվող նոր պաշտոնաթերթ «Էջմիածնին»¹⁸:

Բացի տնտեսական լուրջ խնդիրներից, տպարանը գերծ չէր մնում նաև ներքին անհիմն բախումներից, որոնք պակաս բացասական ազդեցություն չէին ունենում հաստատության աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու վրա: Ասվածն առավել քան վերաբերվում է դեռևս 1917 թ. սեպտեմբերի 16-ից տպարանի տեսուչ հանդիսացող Արսեն վարդապետի¹⁹ և Բարդուղիմեոս եպիսկոպոսի միջև ծագած վեճին՝ կապված եպիսկոպոսի անունն «Արարատ» ամսագրի բաժանորդների ցուցակում «պատշաճ տեղում» չգրելու տեսչի կատարած քայլի հետ²⁰: Դա հանգեցրեց նրան, որ այդ խառնակ իրավիճակում տպարանի տեսուչը՝ առողջական խնդիրների պատճառաբանությամբ, 1918 թվականի փետրվարի 20-ին հրաժարվեց պաշտոնից²¹: Պայքար էր գնում նաև մոմավա-

¹⁷ ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1163, թ. 16:

¹⁸ Թերթի հրատարակության ընդհատումից հետո այն սկսվեց վերահրատարակվել 1944 թ.՝ որպես «Պաշտոնական ամսագիր Հայրապետական Աթոռոյ Ս. Էջմիածնի» («Էջմիածին» (1944-1973): Մատենագիտություն, խմբ.՝ Ա. Հատիսյան, Ս. Քոլյանցյան, կազմող՝ Ս. Կոնիսյան, Էջմիածին, 1975):

¹⁹ Նույն տեղում, գ. 496, թ. 1-2:

²⁰ Նույն տեղում գ. 533, թ. 1-4:

²¹ Նույն տեղում գ. 530, թ. 1:

ճառության «մեկաշնորհը» վերցնելու համար²²։ Լուսարարապետ Անանիա արքեպիսկոպոսը պայքար էր մղում մոմի վաճառքն իր տնօրինության տակ դնելու համար։

Միաբանական ժողովի որոշմամբ՝ 1918 թ. մարտին տեսուչ Լյանակված Աշոտ եպիսկոպոս Շխյանցին ոչ միայն չհաջողվեց լուծել առաջադրված խնդիրները և մեղմել առանց այն էլ գոյություն ունեցող լարված իրավիճակը, այլ իր պաշտոնավարումից երկու ամիս անց՝ 1918 թ. մայիսի 11-ին, ևս հանդես եկավ Մայր Աթոռի տպարանը փակելու առաջարկությամբ²³։

²³ «1918 թ. մայիսի 18-ին կայացած Միաբանական ժողովի 43-րդ նիստում հաշվի առնելով Աշոտ եպիսկոպոսի բերանացի բացատրություններն ու մատճառաբանությունները, տպարանի գործունեությունը Մայր Աթոռի շահերին վնասաբեր համարելով՝ որոշվեց. «անորոշ ժամանակով փակել տպարանը։ Չնայած այս որոշմանը՝ հաստատությունը փաստացի շարունակեց հաջորդ ամիսների ևս թափով գործել, 1919-1920 թթ. գուցե ավելի արգասներ, քան 1918 թ. ողջ ընթացքում։ Այդ տարիներին տպարանը կարողացավ ֆինանսական ճգնաժամը հաղթահարելու ևս մեկ ճանապարհ գտնել։ Խոսքը 1920 թ. հունիսի 23-ին Կաթողիկոսի թույլտվությամբ տպարանի տեսչի և 22 ֆինանսների մինիստրության ներկայացուցիչների միջև կայացած համաձայնության մասին է, որով տպարանը գտնվելու էր ֆինանսների մինիստրության տրամադրության տակ։ Այսինքն՝ տպարանը աշխատացնելու ամբողջ ծախսն ընկնում էր մինիստրության վրա, որի համար Մայր Աթոռն ամսական ստանալու էր 175000 ռուբլի²⁴։ Տպարանի ակտիվ

²² Լույս տեղում, ֆ. 56, ց. 14, գ. 365, թ. 14-17 շրջ.։

²³ Լույս տեղում, ֆ. 57, ց. 2, գ. 530, թ. 3-4, 6 շրջ.։

²⁴ Լույս տեղում ֆ. 57, ց. 2, գ. 588, թ. 4-5։

գործունեության ապացույցը այն մեծարժեք գրքերն էին, որ տպագրվեցին այդ տարիներին²⁵:

Խնդիրների այս ամբողջ համակարգում Մայր Աթոռի տպարանն ուներ նաև կարևոր ձեռքբերում: Խոսքը վերաբերում է վերը նշված ձուլիչ մեքենային: Բանն այն է, որ, այն երբեմն գործի զցելով, հաստատությունը կարողանում էր ապահովել ոչ միայն իրեն անհրաժեշտ տառերի քանակը, այլև տառեր վաճառել դրանք ոչ միայն Երևանում գործող տպարաններին, այլ նաև Ամերկոմի տեղական որբանոցների վարչությանը, որը, թեև քիչ, բայց որոշակի շահույթ էր ապահովում:

1920 թ. դեկտեմբերի 2-ին Հայաստանի Հանրապետության խորհրդայնացումից մի քանի օր անց՝ դեկտեմբերի 17-ին, Խորհրդային Հայաստանի իշխանության բարձրագույն մարմինը հանդիսացող Հայաստանի հեղափոխական կոմիտեի հրապարակած դեկրետի համաձայն, պետականացվեցին հանրապետության տարածքում գտնվող բոլոր հոգևոր և կրթական հիմնարկությունները, այդ թվում՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարանը:

²⁵ Հայ գիրքը 1901-1920 թթ. էջ 563-624:

ДЕЯТЕЛЬНОСТЬ ТИПОГРАФИИ ПЕРВОПРЕСТОЛЬНОГО СВЯТОГО ЭЧМИАДЗИНА В 1918–1920 ГГ.

РЕЗЮМЕ

В развитии культурной жизни Первой Республики Армения не малейший вклад внесла церковь Св. Эчмиадзина. Своими средствами здесь было опубликовано множество книг.

В течении этого периода по сравнению со многими существующими типографиями, типография Эчмиадзина развивала весьма продуктивную деятельность, а церковь приняла большие усилия, чтобы деятельность этого учреждения не останавливалась.

Несмотря на неблагоприятные условия типография не прекратила свою деятельность и стала одним из самых известных центров культурной жизни Первой Республики Армения.

GAYANE GHAZARYAN

THE PRINTING HOUSE ACTIVITIES OF THE MOTHER SEE OF HOLY ETCHMIADZIN IN 1918–1920

SUMMARY

During the existence of the First Republic of Armenia for two and half years the Holy See of Etchmiadzin, had a big contribution to the development of the cultural life having published a series of books by own means.

During this period the printing house of St. Etchmiadzin as compared to others existing in the Republic carried out productive activities and the Church made great efforts for the printing house not to cease its activities.

Despite the destroyed economy and seriousness of the situation in the country the printing house did not cease its activities and by the significance of the published books it became one of the popular cultural centers in the First Republic of Armenia.